ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 հուլիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

86
(3295)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՈՐՈՇԵԼ ԵՆ ԳԱՀԸՆԿԵՑ ԱՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները իշխանության կուլիսներից փոխանցում են, որ իշխանական թիմում սպասվում է հերթական կադրային փոփոխությունը: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ում արդեն ներքին քաղաքական որոշում է կայացվել, ըստ որի՝ Ազգային Ժողովի պաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն այլեւս չի շարունակի պաշտոնավարել այդ կարգավիճակում նոր խորհրդարանում: Իշխանության ներսում, ըստ մեր աղբյուրների, որոշել են նրան ազատել հանձնաժողովի նախագահի պաշտոնի պարտականություններից: Քոչարյանը ստիպված կլինի բավարարվել իշխող խմբակցության շարքային պատգամավորի կարգավիճակով: Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ Անդրանիկ Քոչարյանի փոխարեն իշխանությունը դիտարկում է ՔՊ վարչության անդամ, նախկին պետավտոտեսուչ Արմեն Խաչատրյանի թեկնածությունը: Վերջինս, ըստ մեր տեղեկությունների, իշխանության ներսում արդեն ստացել է քաղաքական աջակցությունը եւ համարվում է հանձնաժողովի նախագահի պաշտոնի հիմնական հավակնորդը:

Թե ինչով է պայմանավորված Անդրանիկ Քոչարյանի պաշտոնանկությունը, իշխանության ներսում առայժմ հրապարակային չեն խոսում: Սակայն մեր զրուցակիցների պնդմամբ՝ վերջին շրջանում նրա շուրջ ստեղծված ներքաղաքական լարվածությունը, ինչպես նաեւ թիմի ներսում առկա դժգոհությունները հանգեցրել են նրան, որ ՔՊ ղեկավարությունը որոշել է փոխել պաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի ղեկավարին: Անդրանիկ Քոչարյանը ունի շատ բարձր հակավարկանիշ, դրա համար էլ ՔՊ-ն ազատվում է նրա հրապարակային ներկայությունից: Իսկ կպահպանի նա պատգամավորական մանդատը, թե ոչ, ցույց կտա ժամանակը:

Երբ հայտնի դարձավ, որ իշխող ՔՊ վարչությունը Ազգային Ժողովի նախագահի պաշտոնում տեսնում է ոչ թե Ալեն Սիմոնյանին, այլ Ռուբեն Ռուբինյանին, առաջ եկավ կարեւոր հարց՝ ի՞նչ ճակատագիր է սպասվում մեր երկրի Սահմանադրությամբ երկրորդ պաշտոնը զբաղեցնող Ալեն Սիմոնյանին: Իհարկե, Ալեն Սիմոնյանի թիմակիցները շտապեցին մեդիահարթակներով շրջանառել իրենց համար ցանկալի վարկածներ՝ թե ԱԺ նախագահը նշանակվելու է ՀՀ նախագահ, հետո գրվեց, որ ոչ, դառնալու է Երեւանի քաղաքապետ, իսկ այժմ արդեն խոսում են, թե կարող է որեւէ նախարարական պաշտոն ստանձնել: Սակայն իրականում Նիկոլ Փաշինյանն արդեն հրապարակավ տվել է այդ հարցի պատասխանը՝ առանց ավելորդ սեթեւեթանքի: Հարցին՝ Ալեն Սիմոնյանը շարունակելո՞ւ է իր աշխատանքը խորհրդարանում որպես պատգամավոր, Փաշինյանը պատասխանել է. «Կքննարկենք, ինքն էլ որոշում կկայացնի, թիմն էլ որոշում կկայացնի: Մենք մեր կարծիքները կհամադրենք, կքննարկենք, կտեսնենք: Բայց ես կարծում եմ, որ շատ կարեւոր է, որ մենք ոչ միայն ունենանք այդ կարգավիճակում գտնվող անձինք, այլեւ նախկինում այդ կարգավիճակում գտնվող անձինք, որովհետեւ դա, ի վերջո, փորձ է: Այս պահին մեր թիմում ԱԺ երկու նախկին նախագահ կա, նախկին նախարարներ կան, նախկին փոխվարչապետ կա եւ այդպես շարունակ: Դա քաղաքական կապիտալ է, որը ես շատ կարեւոր եմ համարում»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Իշխանական կուլիսներում վերջին 5 օրերին ամենաքննարկվող թեմաներից մեկը Ազգային Ժողովի նախագահի պաշտոնում ՔՊ վարչության կողմից «դաբրո» ստացած Ռուբեն Ռուբինյանի թեկնածության հարցն է: Իշխանական շրջանակներից «Ժողովուրդ» օրաթերթի ստացած տեղեկությունների համաձայն՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում ընդհանուր առմամբ դրական են գնահատում վերջին ներքին վերադասավորումները եւ վարչության ընտրությունների արդյունքները: Սակայն ամենամեծ հետաքրքրությունը կենտրոնացած է հենց Ռուբեն Ռուբինյանի շուրջ ձեւավորված կոնսենսուսի վրա: Խմբակցության ներկայացուցիչները ոչ պաշտոնական զրույցներում նշում են, որ Ռուբինյանը պատգամավորների հետ մշտապես պահպանել է աշխատանքային եւ մարդկային կապը, եղել է հասանելի ու բարեհաճ, իսկ որպես ԱԺ փոխնախագահ՝ կարողացել է պահպանել ներքին հավասարակշռությունը նույնիսկ ամենաթեժ քաղաքական փուլերում: Սակայն քննարկումների առանցքում միայն ներքին հարաբերությունները չեն: Իշխանական շրջանակներում շրջանառվող գնահատականների համաձայն՝ Ռուբինյանի կարեւոր առավելություններից մեկը նրա միջազգային կապերն են: Խոսքը ոչ միայն եվրոպական քաղաքական հարթակներում ձեւավորված հարաբերությունների մասին է, այլ նաեւ այն հանգամանքի, որ նա, ըստ իշխանական պատգամավորների, ընդունելի է նաեւ ռուսական քաղաքական շրջանակների համար:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Քաղաքացիական օրենսգրքում 2021 թվականին կատարված փոփոխությունների համաձայն՝ սահմանվել էր որոշակի ժամկետ՝ մինչեւ օրենքի փոփոխությունը կառուցված ինքնակամ կառույցների համար հաշվառվելու եւ օրինականացման դիմելու համար: Նույն ժամանակահատվածում օրենսդիրը սահմանել էր նաեւ, որ բոլոր այն ինքնակամ կառույցները, որոնք կկառուցվեն օրենքի փոփոխությունից հետո, այլեւս օրինականացման ենթակա չեն լինի: Գործնականում ի հայտ եկած այդպիսի բազում խնդիրների լուծման ու ինքնակամ կառույցների օրինականացման համար արդեն իսկ գործող իրավակարգավորումները կընդլայնվեն՝ միաժամանակ ավելի խիստ պահանջներ սահմանելով: Այս մասին ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստի ընթացքում ասել է ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Նանե Ղազարյանը՝ առաջին ընթերցմամբ ներկայացնելով ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը: Զեկուցողի խոսքով՝ օրենքի ընդունումից հետո կառուցված ինքնակամ առանձին կառույցների նկատմամբ գործող օրենսդրությամբ օրինականացման հնարավորության բացակայությունը ոչ բոլոր դեպքերում է բխում հանրային շահից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՓԱՍՏԱՐԿՎԱԾ ԼԻՆԻ»

ArmLur.am-ը զրուցել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածու Մամիկոն Ասլանյանի հետ:

- Պարոն Ասլանյան, այս օրերին Սահմանադրական դատարանը քննում է ընտրությունների արդյունքների վերաբերյալ դիմումները: Ի՞նչ ակնկալիքներ ունեք դատարանի որոշումից:

- Իմ ակնկալիքը մեծապես համընկնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մեծամասնության սպասումների հետ, սակայն ակնկալիքն ու իրական արդյունքը տարբեր բաներ են: Կարեւորն այն է, որ Սահմանադրական դատարանը, որպես իրավաբաններից կազմված ինստիտուտ, կայացնի բացառապես իրավական, ոչ թե քաղաքական որոշում: Հույս ունեմ, որ դատարանը կկարողանա զերծ մնալ քաղաքական ցանկացած ճնշումից եւ գործել իրավունքի շրջանակներում:

- Ընդդիմությունը հաճախ պնդում է, որ Հայաստանում դատական համակարգը լիովին անկախ չէ: Բացի այդ, վերջերս Սահմանադրական դատարանի դատավոր է ընտրվել նախկին իշխող ուժի պատգամավոր: Ինչպե՞ս եք գնահատում այս իրավիճակը:

- Եթե խոսքը միայն նախկին պատգամավոր լինելու մասին է, ապա նշեմ, որ տվյալ դատավորը չի մասնակցում այս գործի քննությանը: Սակայն ավելի լուրջ խնդիր եմ համարում այն, որ 2019 թվականին Սահմանադրական դատարանի նկատմամբ իրականացվել են քաղաքական ճնշումներ, եւ դատարանի կազմը փոփոխվել է օրենսդրական մանիպուլյատիվ փոփոխությունների միջոցով: Դա է ամենամեծ մտահոգությունը: Այնուամենայնիվ, մենք այլ իրավական ճանապարհ չունենք, քան օգտագործել Հայաստանի Հանրապետության ներպետական բոլոր իրավական մեխանիզմները, եւ այդ պատճառով Սահմանադրական դատարան դիմելը այս պահին այլընտրանք չունի:

- Դուք վիճարկում եք ընտրությունների ամբո՞ղջ արդյունքը, թե՞ միայն որոշ ընտրատեղամասերի արդյունքները:

- Ո՛չ, խոսքը միայն երեք ընտրատեղամասի մասին չէ: Մեր իրավաբանական թիմը եւ ընդդիմադիր ուժերը ներկայացրել են տարբեր իրավական հիմնավորումներ՝ պահանջելով ընտրությունների արդյունքները ճանաչել անվավեր, անցկացնել վերաքվեարկություն, ինչպես նաեւ քննարկել մանդատների վերաբաշխման հարցը:

- Այսօր Սահմանադրական դատարանի դիմաց տեսնում ենք ընդդիմադիր տարբեր ուժերի ներկայացուցիչների: Եթե ձեր գլխավոր նպատակը իշխանափոխությունն էր, ապա ինչո՞ւ նախընտրական փուլում չմիավորվեցիք:

- Եթե հետեւել եք ողջ գործընթացին, ապա կտեսնեք, որ Սամվել Կարապետյանը հենց սկզբից հանդես է եկել համախմբման կոչով: Սակայն նա տնային կալանքի տակ էր եւ չէր կարող անձամբ մասնակցել այդ գործընթացին: Որոշ քաղաքական ուժեր բանակցեցին եւ եկան համաձայնության, մյուսները՝ ոչ: Հետընտրական համախմբումն ունի այլ նպատակ, քան նախընտրականը: Բացի այդ, խորհրդարանական համակարգում բնական երեւույթ են նաեւ հետընտրական կոալիցիաները, ուստի այստեղ հակասություն չեմ տեսնում:

- Եթե Սահմանադրական դատարանը ուժի մեջ թողնի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացրած վերջնական արդյունքները, ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու:

- Այդ դեպքում ընդդիմադիր ուժերը միասին կքննարկեն ստեղծված իրավիճակը, կուսումնասիրեն հասարակության տրամադրությունները եւ միայն դրանից հետո որոշում կկայացնեն հետագա քայլերի վերաբերյալ: Այս պահին չեմ կարող ընդդիմության անունից որեւէ վերջնական հայտարարություն անել: Անկախ նրանից՝ որոշումը կլինի խորհրդարան գնալու, թե չգնալու մասին, այն պետք է հիմնավորված եւ փաստարկված լինի: Հակառակ դեպքում դա պարզապես անիմաստ խոսակցություն կլինի:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՆ ՏՐՎԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա է գտնվել Պետական պահպանության ծառայության կազմավորման օրվան նվիրված հանդիսավոր նիստին:

Վարչապետը շնորհավորել է ՊՊԾ ծառայողներին տոնական օրվա առիթով եւ շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետությանը մատուցած եւ մատուցվող ծառայությունների համար: Նիկոլ Փաշինյանն արձանագրել է, որ Պետական պահպանության ծառայության զարգացումը տեսանելի է՝սկսած ամենօրյա ծառայողական հագուստից, սպառազինությունից, տեխնիկայից:

Վարչապետն անդրադարձել է նաեւ ծառայության ֆինանսավորմանը եւ ընդգծել, որ այն էականորեն ավելացել է. «Շատ էական ներդրում է արվում ծառայության աշխատողների որակավորման բարձրացման ուղղությամբ: Մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի ծառայողներն իրենք շահագրգռված լինեն այդ փոփոխություններով, կրթության շարունակականության, լեզուների իմացության, պրոֆեսիոնալ հատկությունների շարունակական զարգացմամբ»: Այդ համատեքստում, Նիկոլ Փաշինյանն ընդգծել է միջազգային համագործակցության շրջանակի ընդլայնումը, որը հնարավորություն է տալիս ավելի մեծ հասանելիություն ունենալ եւ լինել հաղորդակցության մեջ: Վարչապետը կարեւորել է նաեւ Պետական պահպանության ծառայության աշխատողների համար սոցիալական երաշխիքների պատշաճ մակարդակի ապահովումը. «Գործիքը կամավոր ատեստավորումը պետք է լինի, եւ կամավոր ատեստավորման ամեն շրջափուլ իր հետ պետք է բերի սոցիալական երաշխիքների ավելի բարձր մակարդակ: Սա պետք է լինի շարունակական»:

Երկրի ղեկավարն ընդգծել է նաեւ Պետական պահպանության ծառայության ինստիտուցիոնալ առումով զարգացման անհրաժեշտությունը, որովհետեւ այն պետության կարեւորագույն հատուկ ծառայություններից մեկն է: «Նախկինում այս ընկալումն այդքան էլ չի եղել, որովհետեւ ծառայությունը եղել է Ազգային անվտանգության ծառայության կազմում եւ ինքնուրույն կարողությունների զարգացում առանձնապես անհրաժեշտ չի համարվել: Կարծում եմ՝ հիմա այն փուլն է, որ ծառայությունը նաեւ ինքնուրույն, որպես հատուկ ծառայություն, սրանից բխող բոլոր հարցադրումներով եւ պատասխաններով՝ անպայման պետք է զարգանա, եւ դա նաեւ կառուցվածքային որոշակի փոփոխություններ է ենթադրում»:

Նիկոլ Փաշինյանը գոհունակությամբ ընդգծել է ոլորտը երիտասարդների համար գրավիչ դարձնելու հանգամանքը, որը պետք է շարունակաբար զարգացնել: Ելույթով հանդես է եկել նաեւ Պետական պահպանության ծառայության պետ Արթուր Գասպարյանը, ով իր խոսքում անդրադարձել է համակարգի գործունեության հետեւողական բարելավմանն ուղղված աշխատանքներին եւ ծրագրերին: Ծառայողական պարտականությունները կատարելիս ցուցաբերած նվիրումի համար Պետական պահպանության ծառայության մի խումբ աշխատակիցներ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից արժանացել են պարգեւների:

Ի՞ՆՉ Է ՓՈԽՎԵԼՈՒ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ

Կառավարությունը պարզաբանում է տարածել IMEI համարների գրանցման համակարգի վերաբերյալ. «Ի՞նչ է փոխվելու եւ ինչո՞ւ է դա կարեւոր: Հայաստանում նախատեսվում է ներդնել IMEI համարների գրանցման համակարգ, որի նպատակը բջջային հեռախոսների օրինական շրջանառության ապահովումն է: Կարգավորումը միտված է՝

- նվազեցնելու ապօրինի ներմուծված բջջային հեռախոսների շրջանառությունը,
- ապահովելու հավասար եւ արդար մրցակցային պայմաններ օրինական ներմուծողների համար,
- պաշտպանելու սպառողներին կեղծ կամ փոփոխված IMEI համարներով հեռախոսներից,
- ներդնելու բջջային հեռախոսների հաշվառման միասնական շտեմարան:

Միաժամանակ կարեւոր է ընդգծել, որ նախաձեռնությունը կապ չունի քաղաքացիների անձնական տվյալների հավաքագրման կամ վերահսկողության հետ: Ստեղծվող շտեմարանում պահպանվելու է միայն սարքի 15-նիշանոց IMEI համարը՝ առանց որեւէ անձնական տվյալների: Նախաձեռնության վերաբերյալ հանրային քննարկումների ընթացքում հնչել են տարբեր հարցեր եւ մտահոգություններ: Ստորեւ ներկայացնում ենք դրանցից ամենահաճախ հնչող կարծիքներն ու փաստարկված պարզաբանումները»:

ԵՄ-Ն ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԸ



ԵՄ-ն վերացնում է ԱՄՆ-ից արդյունաբերական ապրանքների ներմուծման մաքսատուրքերը: Այս մասին X-ի իր էջում գրել է Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը: «Այսօր (երեկ՝ խմբ.) ԵՄ-ն վերացնում է ԱՄՆ-ից արդյունաբերական ապրանքների ներմուծման մաքսատուրքերը: Սա լավ նորություն է անդրատլանտյան առեւտրի համար: Ավելի մեծ կանխատեսելիություն: Ավելի մեծ ընտրություն: Ավելի լավ գներ ԵՄ բիզնեսի եւ սպառողների համար: Սա պարտավորություն է, որը կատարվել է ԵՄ-ԱՄՆ համատեղ հայտարարության շրջանակներում: Եվ հիշեցնում, որ անդրատլանտյան հարաբերությունները մնում են ամենաարժեքավորն աշխարհում: Շարունակենք կառուցել դրա հիման վրա»,- գրել է Լայենը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՈՒՇԱՆՎԵՐ

ՀՀ գլխավոր դատախազությունը թողարկել է հուշանվեր՝ նվիրված ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքի կառուցման 90-ամյակին: Այս մասին երեկ հայտարարել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը՝Հայաստանի Հանրապետության դատախազության հիմնադրման 108-ամյակին եւ Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Եվրոպական դատախազների երկխոսության հայկական հարթակի շրջանակում Երեւանում մեկնարկած միջազգային համաժողովի ժամանակ՝հավելելով, որ հուշանվերի թողարկման մասին հանրայնացումը կատարվում է Հուլիսի 1-ին՝ ի թիվս այլնի, արժեւորելով կառույցի ճարտարապետական եւ պատմամշակութային նշանակությունը:

«2026 թվականը հոբելյանական տարի է նաեւ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սիմվոլի՝ վարչական շենքի համար: 90 տարի առաջ ճարտարապետ Նիկոլայ Բաեւի նախագծած՝ Վազգեն Սարգսյան 5 հասցեում գտնվող շենքը ոչ միայն վարչական կառույց է, այլեւ Երեւանի ճարտարապետական ժառանգության արժեքավոր նմուշ, այն ընդգրկված է Երեւանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում՝ որպես մայրաքաղաքի պատմական ու մշակութային հիշողության մաս ու պետական ինստիտուտների շարունակականության խորհրդանիշ»,- նշել է ՀՀ գլխավոր դատախազը եւ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության դատախազությունը կարեւորում է պատմամշակութային ժառանգության պահպանման եւ հանրահռչակման գործը՝ այն դիտարկելով որպես պետական ինստիտուտների պատմության եւ ինքնության անբաժանելի մաս:

Հուշանվերի վրա պատկերված է Երեւանի կենտրոնում՝Վազգեն Սարգսյան 5 հասցեում գտնվող ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքը, որը կառուցվել է 1936 թվականին՝ անվանի ճարտարապետ Նիկոլայ Բաեւի նախագծով:

Վազգեն Սարգսյան 5 հասցեում գտնվող՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչական շենքը ներառված է Երեւանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում:

3 ՏԱՐԻ ԱՆՑ

Երեկ հայտնի դարձավ, որ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվել է Արմեն Գյոզալյանը: Հիշեցնենք,որ 2023 թվականին Տեղ գյուղի սահմանամերձ տարածքում ադրբեջանական կողմի հերթական սադրանքի հետեւանքով սկսված փոխհրաձգության ժամանակ հայկական կողմից վիրավորների թվում էր նաեւ հատուկ բանակային կորպուսի հարմանատար Արմեն Գյոզալյանը, որը վիրահատվեց: Ինչպե՞ս էր դեպքը եղել: Ապրիլի 11-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները կրակ էին բացել Տեղ համայնքի ուղղությամբ ինժեներական աշխատանքներ իրականացնող ՀՀ ԶՈՒ զինծառայողների ուղղությամբ: Հայկական կողմը դիմել էր պատասխան գործողությունների: Հայկական կողմն ունեցավ զոհեր եւ վիրավորներ:

ՊԱՇՏՈՆԱՆԿ ԱՐՎԵՑ

ԵՐԵՔ ՏԱՐՈՒՄ Ի՞ՆՉ Է «ԿՈՒՏԱԿԵԼ»

Երեկ առավոտյան ArmLur.am-ը գրել էր, որ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանին Նիկոլ Փաշինյանը ազատելու է զբաղեցրած պաշտոնից: Քիչ հետո արդեն պաշտոնապես հաստատվեց տեղեկությունը:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխանությունները, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը դժգոհ են եղել նրա աշխատանքից:

Այս ազատման ֆոնին մենք փորձել ենք պարզել, թե ֆինանսական եւ գույքային ինչպիսի ունեցվածքով նա եկավ նախարարություն եւ ինչով է հեռանալու պաշտոնից՝ մանրամասն դիտարկելով նրա պաշտոնավարման տարիների ունեցվածքը, ծախսերն ու ստացած եկամուտները:

Դանիել Դանիելյանը ԿԳՄՍ նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնել է 2023 թվականի օգոստոսի 24-ին: Պաշտոնական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ ներկայացված հայտարարագրի համաձայն՝նա արտերկրում ունեցել է միանձնյա սեփականության իրավունքով ձեռք բերված երկու միավոր անշարժ գույք, որոնք գտնվում են Ֆրանսիայում: Դրանք են՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված բնակարանը եւ ավտոտնակը (կամ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը), որոնք երկուսն էլ ձեռք են բերվել գնման եղանակով 2023 թվականի մարտի 3-ին: Տրանսպորտային միջոցների բաժնում պաշտոնյան հայտարարագրել էր 2018 թվականի թողարկման «SMART» մակնիշի մարդատար ավտոմեքենա, որը ձեռք էր բերվել 2022 թվականի մայիսի 6-ին՝դարձյալ գնման եղանակով:

Պաշտոնն ստանձնելու պահին նրա դրամական միջոցները բավականին համեստ էին. բանկային հաշիվների մնացորդներում առկա էր ընդամենը 706,588 ՀՀ դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցներ կամ բանկային ավանդներ հայտարարագրում նշված չէին: Որպես հաշվետու ժամանակաշրջանի եկամուտ՝ Դանիելյանը ներկայացրել էր ԿԳՄՍ նախարարությունից ստացված 135,366 ՀՀ դրամ աշխատանքի վարձատրությունը:

Պաշտոնավարման հաջորդ տարում՝ 2024 թվականին, փոխնախարարի գույքային դրությունը որոշակի փոփոխություններ է կրել: Թեեւ Ֆրանսիայում գտնվող բնակարանն ու ավտոտնակը շարունակել են մնալ նրա միանձնյա սեփականությունը եւ տարվա ընթացքում անշարժ գույքի նոր գործարքներ չեն կատարվել, նա օտարել է իր շարժական գույքը: Մասնավորապես, 2024 թվականի մարտի 6-ին Դանիելյանը 14,500 եվրոյով վաճառել է իր 2018 թվականի արտադրության «SMART» մակնիշի ավտոմեքենան, որի գնորդը եղել է «Garage Prainet» ընկերությունը, եւ տարեվերջի դրությամբ նոր տրանսպորտային միջոց չի հայտարարագրել:

Այդ տարվա ընթացքում նրա բանկային հաշիվների մնացորդներն աճել են՝ տարեսկզբին առկա 1,933,268 ՀՀ դրամից տարեվերջին դառնալով 6,863,012 ՀՀ դրամ: 2024 թվականին ստացված ընդհանուր եկամուտը կազմել է 21,278,075 ՀՀ դրամ: Այս գումարը գոյացել է երկու աղբյուրից՝ ԿԳՄՍ նախարարությունից ստացված 14,851,095 ՀՀ դրամ աշխատավարձից եւ հիշյալ ավտոմեքենայի վաճառքից ստացված 14,500 եվրոյից: Ծախսերի մասով պաշտոնյան հայտարարագրել է 2 միլիոն դրամը գերազանցող մեկ միանվագ ծախս, որը կազմել է 4,143,500 ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է 2025 թվականի տարեկան հայտարարագրին, ապա Դանիել Դանիելյանը շարունակել է սեփականության իրավունքով տիրապետել Ֆրանսիայում գտնվող բնակարանին ու ավտոտնակին, որոնք ձեռք էին բերվել 2023 թվականի մարտի 3-ին, իսկ տրանսպորտային միջոցներ ընդհանրապես չի նշել: Հաշվետու տարվա ընթացքում նկատվել է բանկային միջոցների հետագա աճ. տարեսկզբին հաշիվներին առկա 6,863,012 ՀՀ դրամը տարեվերջին դարձել է 9,177,945 ՀՀ դրամ: Պաշտոնյայի եկամուտների հիմնական աղբյուրը շարունակել է մնալ նախարարությունից ստացված աշխատավարձը, որը 2025 թվականին զգալիորեն ավելացել է՝ կազմելով 18,766,960 ՀՀ դրամ: Միեւնույն ժամանակ, տարեվերջի դրությամբ նա ունեցել է վարկի մայր գումարի մնացորդ՝ 432,800 ՀՀ դրամի չափով: Որպես տարվա ընթացքում կատարված խոշոր ծախս՝ Դանիելյանը հայտարարագրել է վարձակալության համար վճարվող վարձավճար՝ 3,540,000 ՀՀ դրամի չափով, իսկ այլ էական ծախսեր, ինչպիսիք են ուղեւորությունները, ուսման վարձը կամ թանկարժեք գույքի ձեռքբերումը, նշված չեն եղել: Ամփոփելով եւ համադրելով պաշտոնավարման տարիների տվյալները՝ հստակ երեւում է, թե որքան են աճել պաշտոնյայի եկամուտներն ու դրամական միջոցները: Նրա դրամական միջոցները (բանկային հաշիվների մնացորդները) պաշտոնն ստանձնելու օրվա համեստ 706,588 ՀՀ դրամից 2025 թվականի տարեվերջին հասել են 9,177,945 ՀՀ դրամի, ինչը նշանակում է, որ պաշտոնավարման ընթացքում Դանիելյանի դրամական կապիտալն աճել է ուղիղ 8,471,357 ՀՀ դրամով: Ինչ վերաբերում է եկամուտներին, ապա միայն նախարարությունից ստացված տարեկան աշխատավարձը 2024 թվականի 14,851,095 ՀՀ դրամից 2025 թվականին դարձել է 18,766,960 ՀՀ դրամ՝ արձանագրելով 3,915,865 ՀՀ դրամի զգալի աճ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՇԱՆԱԳՈՒՄՆԵՐ ՊՆ–ՈՒՄ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությունները՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը ստորագրել է հրամանագրեր, որոնց համաձայն՝ գեներալ-մայոր Գարեգին Պողոսյանը նշանակվել է հատուկ բանակային կորպուսի հրամանատար՝ ազատվելով 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից, գեներալ-մայոր Սիմոն Նազարյանը նշանակվել է 2-րդ բանակային կորպուսի հրամանատար՝ ազատվելով 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից, գնդապետ Արծրուն Հովհաննիսյանը նշանակվել է ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին արձագանքել է Իսրայելի պաշտպանության նախարար Իսրայել Կացի այն մեկնաբանություններին, որ իրենք երբեք թույլ չեն տա Թեհրանին միջուկային զենք ունենալ: Արաղչին X-ում գրել է, որ Իրանի դեմ սպառնալիքները հզոր պատասխանի կարժանանան: «Իսլամաբադի փոխըմբռնման հուշագրի պայմանները լիովին հստակ են եւ հրապարակային բոլորի համար: ԱՄՆ նախագահը հանձն է առել, որ ԱՄՆ-ն կլռեցնի Թել Ավիվում գտնվող իր «ընտանի կենդանիներին»: Եթե նրանք անտեսեն իրենց «տիրոջը», Իրանը դաս կտա նրանց: Մեր ժողովրդի եւ ղեկավարության դեմ ուղղված ցանկացած սպառնալիք կստանա անհապաղ եւ հզոր պատասխան»,-գրել է Արաղչին: Նա գրառմանը կից ներկայացրել է Իսրայել Կացի խոսքերը, որը հայտարարել է, որ Իրանի գերագույն առաջնորդ Մոջթաբա Խամենեին իրենց թիրախի տակ է: Կացն իրանցիներին նկարագրել է որպես «լավ վաճառականներ», որոնք փորձում են զիջումներ ստանալ բանակցություններում: Իսրայելի պաշտպանության նախարարը շեշտել է, որ երկիրը թույլ չի տա, որ Իրանը միջուկային զենք արտադրի, եւ եթե դա տեղի ունենա համաձայնության միջոցով, ապա «շատ ավելի լավ»:

2 ԱՄՍՈՎ

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Քննչական մարմինը ներկայացրել է խաղբանտարկյալ Արմեն Աշոտյանի բանտային կալանքի ժամկետը երկու ամսով երկարացնելու միջնորդություն: Այս մասին գրել է փաստաբան Ռուբեն Մելիքյանը:

«Միջնորդությունը քննության է առնվելու Հակակոռուպցիոն դատարանում վաղը՝ հուլիսի 2-ին, ժամը 18:30-ին: Հիշեցնեմ, որ Աշոտյանն արգելանքի է վերցվել հունիսի 5-ին, իսկ դատարանը նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառել բանտային կալանքը՝ մեկ ամիս ժամկետով: Նախորդ գործով 777-օրյա կալանքը հաշվի առնելով՝ Արմեն Աշոտյանի անազատությունը ներկայիս ռեժիմի օրոք ընդհանուր առմամբ տեւում է արդեն 800 օրից ավել»,-գրել է նա:

Քննչական Կոմիտեից հայտնել էին, որ 2009-2016-ն ընկած ժամանակահատվածում կրթության եւ գիտության նախարարի պաշտոնը զբաղեցրած Արմեն Աշոտյանը, լիազորված լինելով խթանել կրթության եւ գիտության զարգացմանը, մշակել եւ իրականացնել կրթության եւ գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, 2008-ի օգոստոսի 20-ից մինչեւ 2014-ի ապրիլի 26-ը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի, ապա մինչեւ 2016-ի սեպտեմբերի 20-ը ֆինանսների նախարարի պաշտոնները զբաղեցրած Գագիկ Խաչատրյանի եւ վերջինիս որդու՝ Ա.Խ.-ի նյութական օգուտը՝նրանց կողմից շահեկան պայմաններով, առանց խոչընդոտների, օտարման ոչ ենթակա գույք ձեռք բերելն ապահովելու անձնական շահագրգռվածությունից եւ խմբային շահերից ելնելով, խմբի կազմում՝ ՀՀ «Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ Վ.Ս.-ի, նույն ՊՈԱԿ-ի ռեկտոր Գ.Գ.-ի, պրոռեկտոր Ա.Ա.-ի, Ա.Խ.-ի, Գ.Խ.-ի, ինչպես նաեւ վերջիններիս հետ փոխկապակցված Հ.Թ.-ի հանցակցությամբ պաշտոնական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչի հետեւանքով Հայաստանի Հանրապետության սեփականության ֆոնդից կոռուպցիոն սխեմայի կիրառմամբ դուրս է բերվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Պուշկին փողոցի 38/1 շենքի թիվ 59 հասցեում գտնվող 208 մլն 908 հզր 500 դրամ արժեքով առանձնապես խոշոր չափերով 451.1 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը եւ դրա անբաժանելի մաս համարվող հողամասը եւ ոչ ուսումնական նպատակներով օգտագործելու համար փոխանցվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ վերջինիս հետ փոխկապակցված անձի սեփականության ֆոնդ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ԲԿ–Ի ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԸ

Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ 2001-2020 թվականներին«-Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնը զբաղեցրած անձը, ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իր պաշտոնավարման ժամանակահատվածում բժշկական կենտրոնի աշխատակիցների եւ մի շարքայլ անձանց օժանդակությամբ կատարել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակություն, ինչպես նաեւ շահադիտական նպատակով եւ անձնական այլ դրդումներից ելնելով կատարել է պաշտոնեական կեղծիք: Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որվերը նշված պաշտոնյան իր հետ փոխկապակցված անձանց ձեւական ընդունել է բժշկական կենտրոն աշխատանքի, սակայն, վերջիններիս կողմից աշխատանքի չհաճախելու պայմաններում, ԲԿ-ի պաշտոնատար անձանց օժանդակությամբ շրջանառության մեջ է դրել աշխատանքի հաճախելու վերաբերյալ կեղծ փաստաթղթեր, որոնց հիման վրահիշյալ անձինք աշխատավարձ են ստացել: Արդյունքում՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ին պատճառվել է շուրջ 30 մլն ՀՀ դրամի վնաս:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար բժշկական կենտրոնի նախկին տնօրենին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով(3 դրվագ),(համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին), ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (2 դրվագ) եւ ՀՀնախկին քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով (5 դրվագ), (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասին):

Նախաքննության ընթացքում բժշկական կենտրոնի նախկին տնօրենն ընդունել է իրեն ներկայացված մեղադրանքն ու ամբողջությամբ վերականգնելիանցագործությամբ պատճառված շուրջ 30 մլն ՀՀ դրամի վնասը: Նրա ու եւս 8 անձի վերաբերյալ նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԱՊՕՐԻՆԻ ԴԵՊՔԵՐ

Վաղարշապատի համայնքային ոստիկանները տեղեկություն էին ստացել, որ Էջմիածին քաղաքի բնակիչն անասնագոմում կանեփի բույս է աճեցնում եւ մարիխուանա պահում: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ նրան պատկանող տարածքից հայտնաբերվել եւ առգրավվել է կանեփի 3 բույս, 259 գրամ մարիխուանայի նմանվող չորացրած եւ մանրացրած զանգված, ինչպես նաեւ 260 գրամ քաշով չորացված կանեփի բույս: 70-ամյա քաղաքացին ձերբակալվել եւ փաստաթղթերի հետ ներկայացվել է Վաղարշապատի քննչական բաժին: Հունիսի 23-ին, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, Վաղարշապատի համայնքային ոստիկանները Արտիմետ բնակավայրում թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել 27-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է դեղնականաչավուն չորացրած, մանրացրած մոտ 2,6 գրամ մարիխուանայի նմանվող զանգված: Ըստ երիտասարդի՝ հայտնաբերվածը մարիխուանա է, որը ձեռք է բերել տելեգրամյան ալիքի միջոցով՝ անձնական օգտագործման համար:

Երիտասարդն ու կազմված նյութերը ներկայացվել են Վաղարշապատի քննչական բաժին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում հունիսի 8-ին հաղորդում էր ստացվել «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունից: Հայտնել էին, որ երեկոյան ժամը 8-ի սահմաններում մայրաքաղաքի Ռուբինյանց փողոցի հարեւանությամբ գտնվող տարածքում անհայտ անձինք կտրել են 400 մետր երկարությամբ պղնձե հաղորդալարեր, դրանք տեղափոխել մի քանի մետր, թողել ու հեռացել:

Համայնքային ոստիկանները տարածքում կազմակերպել են գաղտնի հսկողություն եւ ժամեր անց նկատել են «Կիա» մակնիշի մի մեքենա, որի վարորդը կտրած հաղորդալարերի մի մասը տեղադրել է մեքենայի բեռնախցիկում: Վարորդը ձերբակալվել ու մեքենայով հանդերձ տեղափոխվել է բաժին: Պարզվել է նրա ինքնությունը՝ Երեւանի Շահումյան փողոցի բնակիչ 40-ամյա տղամարդ:

Գողության փորձի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Քննությամբ հայտնաբերվել է 19 կապ պղնձե հաղորդալար եւ սանդուղք: Հանգամանքները պարզվում են:

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՓՇՏԱԿԵԼ

Հունիսի 28-ին ծեծկռտուք եւ ավազակություն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 03:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչությունում տեղեկություն է ստացվել, որ Հյուսիսային պողոտա «Պարմա»-ի մոտ կողոպտել եւ ծեծի են ենթարկել մի քաղաքացու: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, արդեն տեղում Երեւանի քրեական ոստիկաններին ՌԴ քաղաքացի 39-ամյա Մարկ Սլավիչը հայտնել է, որ հունիսի 28-ի ժամը 03:20-ի սահմաններում Կարապի լճի մոտ 3 հայ տղաներ հարձակվել են իր վրա, հարվածներ հասցնելով գցել են գետնին, բռնել իր ձեռքերը եւ տաբատի ձախ գրպանից հափշտակել 63 հազար դրամ գումար ու դիմել փախուստի:

Գ. Շամշյանի տեղեկություններով Երեւանի քրեական ոստիկանների կողմից ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված արարքը կատարել են Երեւանի բնակիչ 16-ամյա Մ. Մ.-ն եւ Արմավիրի մարզի բնակիչ 16-ամյա Ն. Ս.-ն եւ ձեռնարկում են միջոցառումներ նրանց եւ գողոնը հայտնաբերելու, ինչպես նաեւ մյուս անձի ինքնությունը պարզելու ուղղությամբ:

Դեպքի փաստով կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

● *Հանրապետությունում հունիսի 30-ից հուլիսի 1-ը գրանցվել է խարդախության, մարմնական վնասվածք պատճառելու 2-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ

Տավուշի մարզպետի աշխատակազմը շարունակում է առատորեն պարգեւատրվել պետբյուջեից:

Սակայն մարզպետն ու մարզպետի աշխատակազմը պետական բյուջեից մարզի սոցիալապես անապահովներին դրամական աջակցություն ցուցաբերելիս ամենեւին բարեհոգություն չեն ցուցաբերում: Հունիսի 26-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին. «1. Հունիսի 23-ի դրությամբ որքա՞ն պարգեւավճար են ստացել Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատողները: 2. Հունիսի 23-ին Դուք որոշել եք 94 քաղաքացիների սոցիալական աջակցության նպատակով պետբյուջեից հատկացնել 5 միլիոն 890 հազար դրամ: Հունիսի 23-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմում մարզի կարիքավորներից դրամական աջակցության քանի՞ դիմում է ստացվել, դրանցից քանի՞սն է բավարարվել, քանիսը՝ մերժվել, հիմնականում ի՞նչ պատճառներով են մերժվել այդ դիմումները»: Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «1. Ս/թ հունիսի 23-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին հատկացվել է 26757,0 հազար դրամ պարգեւավճար: 2. Ս/թ հունիսի 23-ի դրությամբ դրամական օգնություններ են ստացել 219 ընտանիք, մերժվել է 38 դիմումներ: Մերժման պատճառներն են՝ մշտապես եւ կարճաժամկետում կրկնակի դիմողներ, վարկեր մարելու համար աջակցություն, դիմումներ տուն կամ տանիք կառուցելու, վերանորոգելու, շինանյութերի տրամադրման մասին, վագոն տնակ գնելու, սպորտային միջոցառումներին արտասահման մեկնելու համար»: Տավուշի մարզպետի աշխատակազմում աշխատում են թվով 66 աշխատակիցներ, որոնք հունիսի 23-ի դրությամբ, բացի իրենց համեմատաբար բարձր աշխատավարձերը, ստացել են ընդհանուր առմամբ 26 միլիոն 757 հազար դրամ պարգեւավճար: Շուրջ 118 հազար բնակիչ ունեցող Տավուշի մարզի սոցիալապես անապահովներից 257 ընտանիք է մարզպետի աշխատակազմին դիմել, որպեսզի դրամական օգնություն ստանա: Այդ դիմողներից կարիքավոր 38 ընտանիքների դիմումները վերոհիշյալ պատճառներով մերժվել են: Տավուշի մարզպետի հունիսի 23-ի դրոշմամբ կարիքավոր 94 քաղաքացիների սոցիալական աջակցության նպատակով պետբյուջեից հատկացվել է 5 միլիոն 890 հազար դրամ: Դա այն դեպքում, որ Տավուշի մարզպետի աշխատակազմի 66 պաշտոնյաներ պետբյուջեից ստացել են 26 միլիոն 757 հազար դրամ պարգեւավճար: Տարին նոր է կիսվում, մինչեւ տարեվերջ մարզպետարանի ոչ արդյունավետ աշխատող պաշտոնյաների պարգեւատրման գումարները ավելի քան կրկնակի չափով կավելանան: Շուրջ 15 միլիարդ դոլար պետական պարտք ունեցող ՀՀ-ն նոր վարկեր է վերցնում, որ կառավարության հետ կրկնվող գործառնույթներ ունեցող, ոչ արդյունավետ աշխատող մարզպետարանների պաշտոնյաներին մեծ պարգեւավճարներ վճարի: Աբսուրդ վիճակ է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՌԱՋՆԱՅԻՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Հայաստանում նոր ձեւավորվող կառավարությունը եւ խորհրդարանական մեծամասնությունն առաջնային խնդիր է համարում ժողովրդավարական բարեփոխումների ամբողջ փաթեթը վերագործարկելու կամ թարմացնելու գործընթացը: Այս մասին «Եվրոպական դատախազների երկխոսության հայկական հարթակ» երկօրյա միջոցառման բացման արարողության ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը, շնորհավորելով Դատախազության աշխատողի օրվա առթիվ, գոհունակություն հայտնեց միջոցառման անցկացման վերաբերյալ եւ հավելեց, որ այն լավ առիթ է՝ անդրադառնալու դատախազության գործունեությանը եւ կիսելու փորձը մյուս գործընկերների հետ եւ մյուս գործընկերներից լսելու իրենց փորձի մասին:

«Օրենքը, իրավունքը զարգանում է, եւ ինչքան մենք լինենք միջազգային հաղորդակցության մեջ, այնքան ավելի արդյունավետ կլինենք Հայաստանում արդարության եւ արդարադատության հաստատման համաժողովրդական ակնկալիքը իրականություն դարձնելու ճանապարհին»,-ասաց վարչապետը: Նա նկատեց, որ միջոցառման այս տարվա քննարկումը նվիրված է ապօրինի գույքի բռնագանձման համակարգին եւ դրա հետ կապված մի շարք հարցերի:

«Ես ուզում եմ առիթը օգտագործել մի կարեւոր թյուրըմբռնում պարզաբանելու համար. կա ընդհանուր ընկալում, եւ այդ ընկալման պատճառները պարզ են, որ ապօրինի գույքի բռնագանձման համակարգը եւ ինստիտուտն ուղղված է կամ գործում է նախկին պաշտոնյաների գործունեության համատեքստում, բայց թույլ տվեք ասել, որ սա թյուրըմբռնում է, որովհետեւ ապօրինի գույքի բռնագանձման համակարգը իրականում ընթացիկ հակակոռուպցիոն պայքարի կարեւորագույն գործիքներից եւ միջոցներից մեկն է, որպեսզի այս պահին գործող պաշտոնյաներն այդ ազդակը ստանան, որ գույքի նկատմամբ անառողջ եւ ոչ օրինական ուշադրությունը հեռանկար չունի, որովհետեւ այս պահից պետք է կանխատեսելի լինի, թե ինչի է բերելու եւ ինչի է հանգեցնելու ապօրինի գույքի բռնագանձման ինստիտուտը:

Վերջինիս լիարժեք գործարկման հարցում, իհարկե, եւ ժողովուրդը, եւ կառավարությունը մի քիչ անհամբեր են, այնուամենայնիվ, հակակոռուպցիոն քաղաքականության, կառավարության եւ կառավարող մեծամասնության շատ կարեւորագույն սյուներից մեկն է, եւ այս առումով ուզում եմ ընդգծել, որ ինձ համար, որպես վարչապետ, ամենաանհանգստացնող փաստերից մեկն այն է, որ հակակոռուպցիոն քաղաքականությունների մեջ եւ այդ թվում՝ միջազգային վարկանիշերում մենք որոշակի լճացման փուլում ենք հայտնվել. սա իրականում անհանգստացնող փաստ է, որի հետ մենք որեւէ կերպ չենք կարող համակերպվել, որովհետեւ մեզ համար սկզբունքային է, որ մենք հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում անընդհատ եւ սկզբունքային, հետեւողական առաջընթաց արձանագրենք:

Նոր ձեւավորվող կառավարությունը եւ խորհրդարանական մեծամասնությունը առաջնային խնդիր է համարում ժողովրդավարական բարեփոխումների ամբողջ փաթեթը վերագործարկելու կամ թարմացնելու գործընթացը»,-ընդգծեց վարչապետ Փաշինյանը:

ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչները մշտադիտարկման այց են կատարել Շիրակի մարզ, որտեղ պետություն-մասնավոր համագործակցությամբ իրականացվում են Հառիճ գյուղում գտնվող Հառիճավանք վանական համալիրի Սբ Աստվածածին եկեղեցու մուտքի վերնամասում գտնվող որմնանկարի (13-րդ դ.) ամրակայումն ու մաքրումը:



ԿԳՄՍՆ-ից NEWS.am-ին հայտնում են, որ որմնանկարի գիտանախագծային փաստաթղթերը մշակել եւ նախարարությանը կից մոնումենտալ արվեստի հուշարձանների հարցերով աշխատանքային խմբի քննարկմանն էր ներկայացրել Իտալիայում բնակվող հայ բարերար Արա Ջարյանը: Աշխատանքներն իրականացնում է Իտալիայից ժամանած որմնանկարների վերականգնող մասնագետ Քրիստին Լամուրեն: ԿԳՄՍՆ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության ներկայացուցիչները մշտադիտարկման ընթացքում արձանագրված խնդիրները տեղում քննարկել են վերականգնող մասնագետի հետ: Որմնանկարի ամրակայման եւ մաքրման հաջորդ փուլերի աշխատանքները կներկայացվեն լիազոր մարմնի համաձայնեցմանը:

Մշտադիտարկվել են նաեւ պետական բյուջեի միջոցներով Արմավիրի մարզի Ապագա գյուղի մշակույթի տանը գտնվող՝ գեղանկարիչ Սարգիս Մուրադյանի 1970-ական թվականներին իրականացրած «Սասունցիներ» որմնանկարի ամրակայումն ու մաքրումը: ԿԳՄՍ նախարարությունն անվանի գեղանկարչի որմնանկարի վերականգնման աշխատանքները նախաձեռնել է նրա ծննդյան 100-ամյակին ընդառաջ: Ամրակայման եւ մաքրման աշխատանքները մոտենում են ավարտին. դրանք իրականացնում են հայ մասնագետները:

● *Անցած 1 օրում գրանցվել է 12 ավտովթար. 3 մարդ զոհվել է, 19-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆԻՍՏ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՄԵՏՐՈՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ, ՍԵՎԱՆԻ ԿԵՂՏԱՔՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Հանրային ներդրումային կոմիտեի 8-րդ նիստը:

Օրակարգի շրջանակում ներկայացվել են «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտենի «Աջափնյակ» կայարանի կառուցում», «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտենի արդիականացում», «Էլեկտրական քաղաքային լուծումներ եւ շարժունակության խթանում», «Սեւանա լճի ավազանի կեղտաջրերի կառավարում» հանրային ներդրումային ծրագրերի նախագծերը: Քննարկվել են նաեւ Կապսի ջրամբարի եւ ոռոգման ինքնահոս համակարգի կառուցման ծրագրի հետագա ընթացքի եւ հանրային ներդրումային որոշ ծրագրերի մասով բացառության կիրառման հարցերը:

«Երեւանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ տնօրեն Անետա Բաբայանը ներկայացրել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտենի «Աջափնյակ» կայարանի կառուցում» հանրային ներդրումային ծրագրի նախագիծը, ընդգծել, որ ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի Երեւանի բազմամոդալ տրանսպորտային համակարգը՝ արդիականացնելով եւ վերազինելով Երեւանի մետրոպոլիտենը եւ ապահովելով անվտանգ շահագործում, բարձր հուսալիություն եւ ծառայությունների որակ: Մանրամասներ են ներկայացվել ծրագրում ներդրումների իրականացման եւ կառավարման պլանի վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել ծրագրի տնտեսական կենսունակությանը, սոցիալ-տնտեսական օգուտներին եւ շրջակա միջավայրի վրա ազդեցությանը:

Հանրային ներդրումային կոմիտեի նիստում քննարկվել են նախագծի առանձին բաղադրիչները, դիտարկումներ են ներկայացվել ծրագրի արդյունավետ իրականացմանն ուղղված գործնական քայլերի վերաբերյալ:

Անետա Բաբայանը ներկայացրել է նաեւ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտենի արդիականացում» հանրային ներդրումային ծրագրի նախագիծը: Ընդգծվել է, որ ծրագրի իրականացման արդյունքում կբեռնաթափվի վերգետնյա տրանսպորտը բազմամոդալ հաղորդակցության միջոցով, կզարգանա էկոլոգիապես պատասխանատու տրանսպորտը եւ կնվազի օդի աղտոտումը, կբարելավվի բնակիչների տրանսպորտային փորձառությունը եւ ծառայությունների որակը: Մանրամասներ են ներկայացվել պահանջարկի աճին զուգահեռ համակարգի արդիականացման առաջարկի վերաբերյալ:

Ծավալվել է մտքերի փոխանակություն, ընդգծվել է, որ ծրագիրը պետք է իրականացվի փուլային տարբերակով ըստ առաջնահերթությունների՝ հաշվի առնելով ներքին բովանդակային կապը:

Օրակարգի հաջորդ հարցը եղել է «Էլեկտրական քաղաքային լուծումներ եւ շարժունակության խթանում» հանրային ներդրումային ծրագրի նախագծի ներկայացումը: Անդրադարձ է կատարվել առկա խնդիրներին, այդ թվում՝ մեծածավալ ուղեւորահոսքի սպասարկման, փոխադրողական հզորությունների անբավարարության, ծառայության որակի անկայունության, բարձր գործառնական ծախսերի, օդի աղտոտվածության բարձր մակարդակի հետ կապված խնդիրներին: Այս համատեքստում ներկայացվել է, որ նախագծի իրականացումը կնպաստի Երեւանի տրանսպորտային համակարգի զարգացմանը՝ հանրային տրանսպորտի արդիականացմամբ եւ բարձր տարողունակությամբ, էներգաարդյունավետ շարժակազմի ներդրմամբ՝ ապահովելով անվտանգություն, հուսալիություն եւ որակյալ ծառայություններ: Ընդգծվել է, որ այս նախագծով մեկնարկում է հանրային տրանսպորտը լիովին էլեկտրական շարժակազմով փոխարինելու ծրագիրը:

Քննարկման շրջանակում ընդգծվել է ուղեւորահոսքի դինամիկ աճի պայմաններում շարժակազմի արդիականացման եւ հանրային տրանսպորտի ծառայությունների որակի բարձրացման կարեւորությունն ու այդ ուղղությամբ իրականացվելիք ծրագրերը:

Օրակարգի շրջանակում Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Արամազդ Ղալամքարյանը ներկայացրել է «Սեւանա լճի ավազանի կեղտաջրերի կառավարում» հանրային ներդրումային ծրագրի նախագիծը: Մանրամասներ են ներկայացվել կեղտաջրերի մաքրման գործող կայանների ներկա վիճակի եւ առաջարկվող տեխնիկական լուծման վերաբերյալ: Ընդգծվել է, որ ծրագիրը նախատեսվում է իրականացնել 3 փուլով՝ գործող կեղտաջրերի մաքրման կայանների արդիականացում եւ - կենսաբանական մաքրման ավելացում, միջին չափի ագլոմերացիաներում նոր կեղտաջրերի մաքրման կայաններիկառուցում եւ մեկուսացված եւ փոքր գյուղական համայնքների համար փոքր առանձին կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում:

Նիստում քննարկվել են ծրագրի կառավարման շրջանակի եւ ընթացքի հետ կապված հարցեր, անդրադարձ է կատարվել տարբեր ձեւաչափերով ծրագրի իրականացման հնարավորությանը:

Վերոնշյալ նախագծերը քննարկումների արդյունքում հաստատվել են:

Արամազդ Ղալամքարյանը ներկայացրել է նաեւ Կապսի ջրամբարի եւ ոռոգման ինքնահոս համակարգի կառուցման ծրագրի հետագա ընթացքի հետ կապված հարցը: Ներկայացվել են արդեն կատարված աշխատանքները, այդ թվում՝ Ախուրյան գետի ջրի հեռացման համակարգի կառուցման, ոռոգման թունելի մուտքամասի եւ ելքամասի քանդման ու ամրակայման աշխատանքները, վաղ ազդարարման համակարգի տեղադրման, հնագիտական վայրերի պեղումների իրականացման, բուսաշերտի մաքրման աշխատանքները եւ այլն: Հաջորդիվ՝ անդրադարձ է կատարվել առկա իրավիճակին եւ աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ծրագիրն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ ռեսուրսներին, ծրագրի վերափոխման եւ ընդլայնման պլաններին: Հանրային ներդրումային կոմիտեն քննարկել է հարցը, հավանություն տվել ծրագիրն ավարտին հասցնելու համար ներկայացված առաջարկին:

Նիստում քննարկվել է նաեւ հանրային ներդրումային որոշ ծրագրերի մասով Հանրային ներդրումային կոմիտեի կարգով նախատեսված բացառության կիրառման հարցը եւս: Քննարկումների արդյունքում համաձայնություն է տրվել բացառություն կիրառմանը:

Ամփոփելով նիստը՝ վարչապետը կարեւորել է ներկայացված նախագծերի հստակ պլանավորման, ռեսուրսների բաշխման, ռիսկերի կառավարման եւ արդյունքների գնահատման կարեւորությունը:

ԲԱՆԿԵՐ

AI–Ն, ԻՆԺԵՆԵՐԻԱՆ ԵՎ ԲԱՆԿԻՆԳԻ ԱՊԱԳԱՆ

Ակբա բանկը Acba Tech Meetup միջոցառման շրջանակում միավորել է Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի առաջատար մասնագետներին, որի նպատակը կուտակված փորձի փոխանակումն է: Acba Tech Meetup-ի առաջին հանդիպմանը խոսնակները տեխնոլոգիական համայնքի շուրջ 250 մասնակցի ներկայացրել են ոլորտում Ակբայի փորձառությունը եւ պատմել, թե ինչպես է բանկը թվային վերափոխման փուլից անցնում արհեստական բանականության, ինչպես նաեւ AI ագենտների ներդրմանն ու կիրառմանը: Հանդիպման շրջանակում տեխնոլոգիական ոլորտի մասնագետների հետ քննարկվեցին նաեւ կոնկրետ նախագծերի օրինակներ, դրանց խնդիրներն ու հնարավոր լուծումները: «Ակբայում մենք ունենք բավականին զարգացած, հզոր ինժեներական թիմ, եւ այսօրվա միջոցառման նպատակը կուտակված փորձի փոխանակումն է Հայաստանի տեխնոլոգիական համայնքի առաջատար մասնագետների հետ: Ժամանակակից ինդուստրիան ունի բազմաթիվ մարտահրավերներ, եւ այս պահին հաղթել են այն կազմակերպությունները, որոնք ունակ են անընդհատ սովորել, ադապտացվել ժամանակակից մարտահրավերներին եւ փոփոխություններին»,- նշել է Ակբա բանկի թվային պլատֆորմների եւ տեխնոլոգիաների տնօրեն, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Տիգրան Սիմոնյանը:

Մասնակիցների առաջարկներն ու հետադարձ կապը կձեւավորեն հաջորդ Acba Tech Meetup-ի օրակարգը՝ նոր թեմաներով եւ բաց քննարկումներով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Universal Hospital Product ընկերությունում բժշկական նշանակության բինտերի եւ թանզիֆե անձեռոցիկների արտադրությունն այսօր իրականացվում է ժամանակակից հոսքագծերով՝ արտադրության ամբողջական ցիկլով:

Ընկերությունը սկսել է գործունեությունը 2011 թվականին, իսկ այժմ արդեն հայկական շուկայում ունի գրեթե 90-95% մասնաբաժին: Բացի ներքին շուկայից, արտադրանքն արտահանվում է նաեւ Վրաստան:

Զարգացման ճանապարհին կարեւոր դեր է ունեցել Կոնվերս Բանկը՝ իր բիզնեսի ֆինանսավորման ընդգրկուն գործիքակազմով: Ընկերության ընդլայնման, հումքի ձեռքբերման եւ արտադրական հզորությունների ավելացման համար անհրաժեշտ ֆինանսավորումն ապահովվել է Բանկի աջակցությամբ:

Այսօր Universal Hospital Product-ում արդեն մտածում են նոր շուկաների մասին՝ չդանդաղեցնելով արտադրության ռիթմը եւ դիտարկելով նաեւ եվրոպական շուկա մուտք գործելու հնարավորությունը: «Ամենաբարդ փուլում մեր կողքին կանգնեց Կոնվերս Բանկը: Հիմնական խնդիրը ֆինանսավորումն էր, եւ Բանկի աջակցության շնորհիվ կարողացանք շարունակել զարգացումը»,-նշում են ընկերությունում:

Մանրամասն՝ conversebank.am

010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՋԵՆԻՖԵՐ ԼՈՊԵՍ

«ԲԱԺԱՆՈՒՄԸ ՁԱԽՈՂՈՒՄ ՉԷ, ԱՅԼ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԿԻԶԲ»

Ամերիկացի երգչուհի եւ դերասանուհի Ջենիֆեր Լոպեսը կիսվել է հարաբերությունների ավարտի վերաբերյալ իր տեսակետով՝ մասնակցելով Կարիմ Ռահմայի Subway Takes ինտերնետային հաղորդմանը:

56-ամյա աստղի խոսքով՝ բաժանումները չպետք է ընկալվեն որպես պարտություն: «Բաժանումը ձախողում չէ: Անկեղծորեն կարծում եմ, որ այն ճանապարհ է դեպի քո լավագույն տարբերակը», - նշել է Լոպեսը: Նրա համոզմամբ՝ հարաբերությունների ավարտը նույնիսկ արժե նշել. «Եթե բաժանվել եք, պետք է շնորհավորեն ձեզ: Դուք որոշում եք կայացրել, եւ, հավանաբար, դա լավագույն լուծումն էր բոլորի համար»:

Լոպեսը նաեւ կարծիք է հայտնել, որ հաճախ հարաբերություններում ավելի շահեկան դիրքում է լինում այն մարդը, ումից բաժանվում են: Նրա խոսքով՝ եթե մարդը մշտապես կոտրում է ուրիշների սրտերը, իրականում հենց ինքն է կորցնողը: Երգչուհին ընդգծել է, որ կյանքի ամենամեծ անձնական աճը հաճախ գալիս է հենց ցավոտ փորձառություններից: Նա նշել է, որ թե՛ սիրային, թե՛ աշխատանքային հիասթափությունները ստիպում են մարդուն վերանայել սեփական քայլերը, հասկանալ սխալներն ու փոխվել դեպի լավը:

Զրույցի ընթացքում Լոպեսը խոսել է նաեւ այն մասին, թե ինչպիսի տղամարդիկ են իրեն դուր գալիս՝ ընդգծելով, որ արտաքին տեսքը որոշիչ չէ: «Ես չեմ խտրականացնում: Ինձ կարող են դուր գալ եւ նիհար, եւ մի փոքր փորիկով տղամարդիկ, եւ մորուքով, եւ առանց մորուքի: Ամենակարեւորը մարդու ներաշխարհն է», - ասել է նա:

Հիշեցնենք, որ Ջենիֆեր Լոպեսը եւ Բեն Աֆլեքը վերսկսել էին իրենց հարաբերությունները 2021 թվականին՝ շուրջ երկու տասնամյակ անց առաջին նշանադրության չեղարկումից հետո: Նրանք ամուսնացել էին 2022 թվականին, սակայն 2024-ին ամուսնալուծվել:

Ավելի վաղ Լոպեսը տասը տարի ամուսնացած էր երգիչ Մարկ Էնթոնիի հետ, որի հետ ունի երկվորյակ երեխաներ՝ Մաքսն ու Էմմեն:

Վերջին ամիսներին դերասանուհուն կապում էին «Office Romance» ֆիլմի խաղընկեր Բրեթ Գոլդսթեյնի հետ, սակայն մայիսին նա հայտարարել էր, որ ներկայում միայնակ է եւ իրեն լիովին երջանիկ է զգում նաեւ առանց հարաբերությունների: Նա նաեւ նշել էր, որ ապագայում, եթե հանդիպի «բավականաչափ լավ» մարդու, բաց կլինի նոր սիրո համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՏՊԱՎՈՐԻՉ ՀԱՂԹԱՆԱԿ

Երեւանում ընթացող Բենուր Փաշայանի անվան հունահռոմեական ոճի ըմբշամարտի հուշամրցաշարը մեկնարկել է հայ երկրպագուների համար նշանակալի իրադարձությամբ. Մ-23 աշխարհի չեմպիոն Հայկ Խլոյանը կարեւոր հաղթանակ է տարել տիտղոսակիր մրցակցի նկատմամբ, գրում է armsport-ը:

97 կգ քաշային կարգի 1/8 եզրափակիչի շրջանակում Հայաստանի ներկայացուցիչը մրցագորգ է դուրս եկել օլիմպիական չեմպիոն, աշխարհի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Մուսա Եվլոեւի դեմ: Չափազանց համառ ու լարված դիմակայությունում Խլոյանը գերազանցել է ռուսաստանցի ըմբիշին՝ առավելության հասնելով 3-2 հաշվով:

Հատկանշական է, որ Խլոյանի այս գոտեմարտին տրիբունայից անձամբ հետեւում էր օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Արթուր Ալեքսանյանը:

Նշենք, որ Եվլոեւը երկար ժամանակ բացակայում էր մրցագորգից: Անվանի ըմբիշը կարիերայում մեծ դադար վերցնելու մասին հայտարարել էր դեռեւս 2022 թվականին: Փաստացի, Եվլոեւը մեծ սպորտ է վերադարձել շուրջ չորս տարվա դադարից հետո՝ մասնակցելով երեւանյան միջազգային մրցաշարին:

Հիշեցնենք նաեւ, որ Մուսա Եվլոեւը երկար տարիներ եղել է Արթուր Ալեքսանյանի գլխավոր մրցակիցներից մեկը: Տոկիո-2020 օլիմպիական խաղերի 97 կգ քաշային կարգի եզրափակիչում Եվլոեւն առավելության էր հասել Հայաստանի հավաքականի առաջատարի՝ Արթուր Ալեքսանյանի նկատմամբ:

ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ

Մարոկկոյի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Մոհամեդ Ուահբին մեկնաբանել է ԱԱ-2026-ի 1/16 եզրափակիչում Նիդերլանդների նկատմամբ տարած դրամատիկ հաղթանակը (1-1, հետխաղյա 11-մետրանոցներով՝ 3-2): Հանդիպման հիմնական ժամանակում Նիդերլանդների կազմում 72-րդ րոպեին հաշիվը բացել է Կոդի Գակպոն, իսկ մարոկկացիներին պարտությունից փրկել է Իսա Դիոպը՝ աչքի ընկնելով 90+1-րդ րոպեին: 1/8 եզրափակիչում աֆրիկյան ընտրանին կմրցի Կանադայի հավաքականի հետ:

«Կատարում կայացած աշխարհի առաջնությունը փոխեց Մարոկկոյի հավաքականի մտածելակերպը: Ես լիարժեք իրավունք ունեմ խոսելու այդ մասին: Խաղացողները հավատում են իրենց ուժերին, իսկ երկրպագուները հավատում են թիմին: Դա շատ կարեւոր է: Նրանք պահանջկոտ են, բայց միայն այն պատճառով, որ գիտեն՝ մենք կարող ենք հեռուն գնալ: Գիտենք, որ շատերը կարծում են, թե Կանադայի հետ խաղը հեշտ զբոսանք է լինելու: Դա այդպես չէ: Մեզ բարդ մրցակից է սպասվում: Մենք պետք է ինքներս մեզ ասենք, որ մեզ ոչ ոք չի կարող կանգնեցնել: Եվ մեզ իսկապես ոչ ոք չի կանգնեցնի, եթե խաղանք այնպես, ինչպես կարողանում ենք: Իհարկե, անպարտելի թիմեր չկան, եւ ես դա ասում եմ տղաներին: Եթե մենք սխալներ թույլ տանք, ապա տուն կգնանք: Մենք պետք է համոզված լինենք, որ լիովին պատրաստ ենք առավելագույն արդյունք ցույց տալուն»,- Ուահբիի խոսքերն է մեջբերում France 24-ը, հայտնում է armsport-ը:

Հիշեցնենք, որ ԱԱ-2022-ում Մարոկկոն զբաղեցրել էր 4-րդ տեղը՝ գրանցելով աֆրիկյան թիմերի պատմության լավագույն արդյունքը աշխարհի առաջնություններում: Այն ժամանակ թիմը գլխավորում էր Վալիդ Ռեգրագին: Հատկանշական է, որ նախորդ տարի Մարոկկոյի երիտասարդական հավաքականը հենց Ուահբիի գլխավորությամբ նվաճել էր մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնության չեմպիոնի տիտղոսը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԱ–2026

Ֆուտբոլի 2026 թվականի Աշխարհի առաջնության 1/16-րդ փուլում Ֆրանսիայի հավաքականը 3-0 հաշվով հաղթեց Շվեդիայի ընտրանուն: Դիդյե Դեշամի թիմի կազմում դուբլ ձեւակերպեց Մբապեն, եւս մեկ գոլով աչքի ընկավ Բարկոլան: Օլիսեն այս խաղում երկու գոլային փոխանցում կատարեց. նա 5 ասիստով լավագույնն է այս պահին ԱԱ-ում: Մբապեն 6 գոլով կիսում է առաջին տեղը Մեսսիի հետ ռմբարկուների մրցավազքում. Կիլիանն իր ակտիվում ունի նաեւ երկու ասիստ ու 8 միավորով (6+2) ամենաարդյունավետն է մրցաշարում այս պահին: Նշենք, որ 1/8 եզրափակիչում Ֆրանսիացիները կհանդիպեն պարագվայցիների հետ: 1/8 եզրափակիչի երեք զույգ արդեն հայտնի է.

Ֆրանսիա-Պարագվայ
Մարոկկո-Կանադա
Բրազիլիա-Նորվեգիա
(Նյութը armsport-ից)

ՄԲԱՊԵՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ

Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն դարձել է Աշխարհի առաջնության փլեյ-օֆֆի պատմության մեջ առաջին ֆուտբոլիստը, ով ամենաշատ գոլերն է խփել, գրում է armsport-ը: 2026 թվականի ՖԻՖԱ-ի Աշխարհի առաջնության 1/16 եզրափակիչի՝ Շվեդիայի դեմ խաղում Մբապեն բացել է խաղի հաշիվը 45-րդ րոպեին: Հաշիվը նյութը գրելու պահին 2-0 է Ֆրանսիայի հավաքականի օգտին: Հարձակվողն այժմ ունի ինը գոլ Աշխարհի առաջնության փլեյ-օֆֆի ինը խաղում՝ գերազանցելով բրազիլացիներ Լեոնիդասին (ութ գոլ հինգ խաղում) եւ Ռոնալդոյին (ութ գոլ տասը խաղում):

Մբապեն նաեւ Աշխարհի առաջնությունների բոլոր ժամանակների ռմբարկուների ցուցակում միանձնյա երկրորդ տեղն է զբաղեցնում՝ 17 գոլով: Ֆրանսիացին գերազանցել է Գերմանիայի հավաքականի նախկին հարձակվող Միրոսլավ Կլոզեին, ով խփել է 16 գոլ:

Առաջեւում է միայն Արգենտինայի հավաքականի ավագ Լիոնել Մեսսին, ով Աշխարհի առաջնություններում խփել է 19 գոլ:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 5-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Երեք խոզուկ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է Կյանքի խոսք եկեղեցին համարվում աղանդ, չէ՞ որ շատ մարդիկ վկայում են իրենց կյանքում եղած հրաշքի մասին:

Ամալյա Գրիգորյան, 51 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *Սկիզբը՝նախորդ համարում*

Բոլոր աղանդների հիմնադիրները «տեսիլքով» են ստանում իրենց «կոչումն» ու «իշխանություն» ի տարբերություն ավետարանական վերոհիշյալ սկզբունքի, հանդես գալով պարզապես ինքնակոչ քարոզիչներ, ովքեր ոչ մի իշխանություն էլ չեն ստացել, ինչը պահանջում է ուղղափառ դավանանքը: Սա արդեն լուրջ պատճառ է նրանց աղանդ համարելու: Ասում են՝ մենք ընդունում ենք Ս. Երրորդությունը: Սատանան էլ է ընդունում Ս. Երրորդությունը, նա գիտի, որ այն կա, հետո՞ ինչ: Ասել, թե ես ընդունում եմ Ս. Երրորդությունը, նշանակում է ոչինչ չասել, քանի որ այսքանը բավական չէ: Ս. Երրոդությունը ոչ թե պետք է ընդունել, այլ դավանել, ճանաչել ըստ Ս. Գրքի հայտնությունների, այլ ոչ թե սեփական «հայտնությունը» հորինել, ինչպես անում են «Կյանքի խոսք» աղանդում: Խոսքը լեզվախոսության մասին է, ինչն ամբողջությամբ հակառակ է Ավետարանական ուսուցումներին եւ ուղղափառ դավանանքին: Ավետարանն ասում է, որ Աստված Ինքն է տալիս շնորհներ, այնպիսի շնորհներ, ինչպիսիք Ինքն է կամենում, սակայն «Կյանքի խոսքի» հետեւորդները անպայման Աստծո առաջ պայման են դնում, թե ինձ լեզուներով խոսելու շնորհը տուր, քանի որ ըստ իրենց, եթե դու լեզուներ չես խոսում, ապա Ս. Հոգի չունես: Սա էլ լուրջ հիմք է ասելու, որ Ս. Երրորդությունը ընդունում են այնպես, ինչպես իրենց է հարմար, այլ կերպ՝ ինչպես սատանան է ընդունում: Ի դեպ, «Կյանքի խոսք» աղանդը հայտարարում է, որ գործում է բաց ու թափանցիկ, սակայն իրենց եթերներին հետեւելով երբեք չես տեսնի, թե ինչպես են էքստազի մեջ ընկած լեզվախոսությամբ բարբաջում, սա թաքցնում են հասարակությունից:

1. «Կայնքի խոսք» աղանդը մերժում է Մյուռոնը,
2. Այս կազմակերպությունը մերժում է նաեւ եկեղեցին, որը հաստատեց Քրիստոս վերնատան մեջ: Վերնատունը եղավ առաջին եկեղեցի-մատուռը, ուր հավաքվում էին առաքյալները:
3. Այս կազմակերպությունում մերժում են նվիրապետական կարգը, որը հաստատեցին Քրիստոս եւ իր առաքյալները:
4. Մերժում են սրբերի բարեխոսությունը: Մերժում են սրբազան ավանույթը, ինչի մասին վկայում է Պողոս առաքյալը, ասելով, որ ավանդույթը սուրբ պահեք: Կարելի է այս շարքը շարունակել, սակայն այսքանը բավական է ցույց տալու համար, որ իրականում «Կյանքի խոսքը» տարբեր է Հայ եկեղեցուց եւ այդ տարբերության արդյունքում համարվում է աղանդ, այսինքն շեղված ճշմարիտ ուղուց:

Շարունակությունը՝հաջորդ համարում

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ոլայմաններով կարող եմ ստանալ ուսանողական վարկեր:

Դավիթ Գալստյան, 25 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս ծրագիրը կրթության ֆինանսավորման այլընտրանքային գործիք է, որ հնարավորություն կտա Ձեզ ձեռք բերել վարկեր ուսումնառության ընթացքում եւ դրանց հիմնական մասը մարել ուսումնառության ավարտից հետո: Ծրագրի շրջանակում ուսանողներին վարկեր են տրամադրվում 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որից 2 տոկոսը սուբսիդավորում է պետությունը, իսկ մեկ տարվա ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների դեպքում սուբսիդավորումը կկազմի 3 տոկոս: Վարկերը տրամադրվում են 10 տարի մարման ժամկետով՝ սահմանելով արտոնյալ ժամկետ՝ ուսումնառության ընթացքում առավելագույնը 4 տարվա համար, ինչը նշանակում է, որ այս ընթացքում մայր գումարի մարում տեղի չի ունենում, վճարվում են միայն տոկոսադրույքները: Յուրաքանչյուր ուսանողի հաշվով նախատեսված է առավելագույնը 1.800.000 դրամ՝ առավելագույնը 4 մասնաբաժնով, սակայն ոչ ավելի, քան 450 հազար դրամը՝ կախված յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված ուսման վարձավճարի չափից:

Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել «Բնակարան երիտասարդներին» (http://www.nmc.am/pages.php?al=young_family) վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի



Արմավիրի մարզում բախվել են «Volkswagen»-ը եւ «Mitsubishi»-ն. վերջինը հայտնվել է երթեւեկելի գոտուց դուրս, կա 1 զոհ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 7 + 12 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 6 + 10 + 20 + 24
	Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 25 + 28
	Գեղարքունիք	+ 7 + 11 + 18 + 22
	Լոռի	+ 7 + 12 + 22 + 25
	Տավուշ	+ 8 + 12 + 22 + 25
	Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 + 19 + 23
	Արագածոտնի նախալեռներ	+ 11 + 16 + 24 + 29

	Արարատ	+ 14 + 17 + 28 + 30
	Արմավիր	+ 16 + 19 + 29 + 32
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 18 + 22
	Վայոց ձորի նախալեռներ	+ 15 + 19 + 29 + 32
	Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 18 + 21
	Սյունիքի նախալեռներ	+ 12 + 15 + 22 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 29 + 32
	Երեւան	+ 17 + 19 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **01.07.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*